

**ՀՀ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՆԱՆԿԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր - ֆինանսական կայունություն, կորպորատիվ կառավարում, գույքի աճուրդներ, սնանկության կառավարիչ, սնանկության կանխարգելում, պսևդոսնանկացում, ֆինանսական առողջացում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունների՝ որպես տնտեսության առանցքային կազմակերպական օղակի, անվճարունակ դառնալու հանգամանքը պայմանավորված է դրանց իմունային համակարգի անբավարարությամբ: Վերջինս դրսևորվում է մրցակցային բնականոն զարգացումների պարագայում բիզնեսում մնալու կարողունակությամբ, որն էլ, իր հերթին, հետևանք է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ կառավարման ներազդման լծակների ոչ նպաստավոր գործադրման: Այդ պայմանների շարքում են, նախևառաջ, տնտեսախրավական կարգավորումները¹:

Ոչ բնականոն զարգացումների պարագայում, ինչպիսիք են COVID-19-ը և երկրում ետպատերազմական իրավիճակը, ողջ տնտեսությունը առերեսվել է ճգնաժամային իրավիճակի հետ: *Ահա այս պարագայում կազմակերպությունների իմունային համակարգի ամրապնդման միջոցառումներից կարելի է ընդգծել պետության կողմից ֆինանսական սնուցման աջակցման փաթեթների տրամադրումը*²:

¹ Հարցերի շրջանակը, դրանց կիրարկման արդյունավետության ու բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններին առարկայնորեն կարելի է ծանոթանալ՝ Վ.Սարգսյան, Սնանկության կառավարման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների օրինակով), Երևան, 2020, ատենախոսություն:

² Դեռևս վաղ է համապարփակ գնահատական տալ տարաբնույթ աջակցման փաթեթներին, որոնք ուղղված են եղել բիզնեսի կենսունակության պահպանմանն ու զարգացմանը: Այսուհանդերձ, նկատենք, որ տարբեր գնահատումներով նախորդ տարում ՀՀ Կառավարությունը շուրջ 210 մլրդ դրամի հատկացումներ է ուղղել բիզնեսի աջակցմանը՝ նկատի ունենալով, որ դրանով, ըստ փորձագիտական գնահատականների, կկանխվի 600-ից մինչև 1 տրիլիոն չափի ՀՆԱ-ի պոտենցիալ կորուստը: Միևնույն ժամանակ նկատենք, որ 210 մլրդ դրամ չափաքանակով աջակցության չափաբաժինը ներառել է շուրջ 50 մլրդ դրամը, որոնք տրվել են նպատակային վարկերը և հարկերը վճարելու համար: Թերևս սա չի կարող համարվել որպես լավագույն այլընտրանքը (գոյություն ունեն տարբեր սանդղակներ հարկային արձակուրդներ, անփոխհատույց հատկացումներ և այլն):

Իմունային համակարգի թուլացման մեկ այլ դրսևորում է խտրական, ոչ մրցակցային միջավայրը: Ուստի, կազմակերպությունների սնանկության կանխարգելման, օրենսդրական և կառուցվածքային բարելավումների վերաբերյալ բավարար լուծումների առաջադրումը խիստ կարևորվում է ինչպես բնականոն զարգացումների, այնպես էլ հնարավոր շուկային ազդեցությունների ժամանակ:

ՀՀ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Կազմակերպությունների արդյունավետ գործունեության կարևոր նախապայմաններից է ներքին կանոնների համալիրը (կազմակերպության ղեկավարման, խորհրդի, բաժնետերերի, աշխատակիցների և այլ շահառուների միջև առկա հարաբերությունները), որն էլ կազմում է կորպորատիվ կառավարման էությունը: Իսկ կորպորատիվ կառավարման հիմնարար արժեքներից է այն, որ այդ համակարգը պետք է ճանաչի շահառու անձանց՝ օրենքով սահմանված իրավունքները և խրախուսի կազմակերպությունների և շահառուների ակտիվ համագործակցությունը՝ ուղղված հասարակության անդամների բարեկեցության աճին, աշխատատեղերի ստեղծմանը և ֆինանսապես առողջ ընկերությունների կայունությանը: Նշված արժեքների պահպանության անհրաժեշտությունը ամրագրված է ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի «Շայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» որոշմամբ: Մինևույն ժամանակ նախատեսվում է, որ ՀՀ պետական կառավարման մարմինները պետություն-մասնավոր հատված գործընկերության, պետական աջակցության, ինչպես նաև հարկային կամ մաքսային արտոնությունների տրամադրման ժամանակ պետք է ղեկավարվեն ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջները կատարող ընկերություններին նախապատվություն տալու սկզբունքով: Այսինքն, պետության կողմից աջակցություն ստանալու համար կարևորվում է առևտրային կազմակերպությունների (բաժնետիրական ընկերությունների) կողմից ներքին գործառությանին և ֆինանսական կարգապահությունը: Նշված պայմանների հաշվառումը և ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության անկյունաքար դարձնելը ապահովում են ընկերության կորպորատիվ կառավարման մասնակիցների (սեփականատերեր, կառավարիչներ և վարձու աշխատողներ) շահերի ներդաշնակություն, կորպորատիվ կառավարման սկզբունքների առաջնայնության ապահովում, որն է ապահովում է ընկերության ֆինանսական

կայունությունը և դրանով իսկ սնանկության կարխարգելումը ընկերության «ներսից»: Հայաստանի Հանրապետությունում սնանկության գործընթացի ամենախոցելի կողմերից մեկը սնանկ ճանաչված առևտրային կազմակերպությունների **գույքի աճուրդներն** են, որոնք տարիներ շարունակ համապետական միջոցների համապետական միջոցներով (գույքի տարբեր դրսևորումներով) չեն դարձել եկամուտների արդյունավետ գեներացիայի աղբյուր: Նշվածը հետևանք է սնանկության գործընթացի կազմակերպման ոչ թափանցիկ, ոչ հրապարակային գործողությունների, ինչպես նաև սնանկության գործընթացում գտնվող կազմակերպությունների գույքի ընդհանուր վաճառքների կազմում էլեկտրոնային աճուրդների ցածր տեսակարար կշռի: Միևնույն ժամանակ, այս երևույթի թերությունների արմատական բացահայտման ու լուծման ուղիների մատնանշումը կարիք ունի լրացումների և հիմնավորումների: Բանն այն է, որ սնանկության գործընթացում գտնվող առևտրային կազմակերպությունների գույքի աճուրդների կազմակերպումը առերևույթ հրապարակային և թափանցիկ է, մինչդեռ նույնիսկ էլեկտրոնային աճուրդները, որպես հրապարակային սակարկությունների ամենաարդյունավետ ձև, մեզանում իրականություն դարձան բավականին ուշ, երբ սնանկության «առաջին ալիքի» ամենախոշոր զանգվածը պարզապես սնանկացվեց՝ պատճառելով հսկայական վնասներ ինչպես կազմակերպություններին, այնպես էլ պետության շահերին: Այդ երևույթը շարունակվում է նաև ներկայումս: Այսպես, Doing Business 2020-ում Անվճարունակության լուծման (Resolving insolvency) ցուցիչի հաշվարկման ժամանակ դիտարկվող անվճարունակության գործընթացում ընդգրկված գույքի հետ վերադարձման ցուցանիշը մեկ դոլարի հաշվով կազմել է ճապոնիայում՝ 92.1 ցենտ (որն ամենաբարձր ցուցանիշն է բոլոր երկրների շարքում), Վրաստանում՝ 40.5 ցենտ, Ադրբեջանում՝ 39.7 ցենտ, Հայաստանում՝ 39.2 ցենտ, Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 36.1 ցենտ և Թուրքիայում՝ 10.5 ցենտ¹: Բերված ցուցանիշը Հայաստանի համար վկայում է, որ սնանկացման գործընթացը ոչ միայն ծախսատար է, այլև անարդյունավետ: Այս հանգամանքը պայմանավորված է հիմնականում սնանկացված առևտրային կազմակերպությունների գույքի աճուրդների կազմակերպման գործում տեղ գտած բացթողումներով և սխալներով: Վերջիններս հետևանք են գույքի հրապարակային սակարկության՝ աճուրդի ինչպես օրենսդրական, այնպես էլ կազմակերպական բնույթի բացթողումներով: Նկատենք նաև, որ 2020 թվականին տնտեսագիտության գծով նոբելյան մրցանակակիրներ

¹Տես՝ <https://www.doingbusiness.org/en/data/exploretopics/resolving-insolvency> էլեկտրոնային հարթակում տեղադրված տեղեկատվական շարքերը:

են ճանաչվել ԱՄՆ-ի պրոֆեսորներ Պոլ Միլգրոմը (Paul R. Milgrom) և Ռոբերտ Ուիլսոնը (Robert B. Wilson) «Աճուրդների տեսության կատարելագործումը և աճուրդների նոր ձևաչափերի հայտնաբերումը» (“Improvements to auction theory and inventions of new auction formats”) աշխատության համար¹: Այդ ուսումնասիրության հետ ծանոթությունը բերում է այն եզրահանգման, որ ՀՀ-ում կիրառվող աճուրդների վերաբերյալ օրենսդրությունը գտնվում է սաղմնային վիճակում, քանի որ այն զուրկ է ճկունությունից, գործընթացի կազմակերպումը իրականացվում է կարծրատիպերով, և որոնց պատճառով մեծ է այդ ոլորտում ստվերային գործարքների տեսակարար կշիռը, ինչն էլ նվազագույնի է հասցնում աճուրդների արդյունավետության աստիճանը: Գույքի աճուրդների կազմակերպումը դե յուրե պետք է լինի հրապարակային և թափանցիկ, սակայն, դե ֆակտո գործ ունենք հակառակ պատկերի հետ:

Խոսելով սնանկության գործընթացում գտնվող **ակտիվների կառավարման ցածր արդյունավետության** մասին՝ անդրադառնանք այլ հանգամանքի ևս: Նշենք, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի (ՀՀ ԱԾ կողմից 2006 թ. դեկտեմբերի 25-ին ընդունված) հոդված 30-ի (Կառավարչի վարձատրությունը) 2-րդ մասով սահմանված է. «2. Եթե սույն օրենքով նախատեսված դեպքերում կառավարչի վարձատրության այլ չափ նախատեսված չէ, ապա կառավարչի վարձատրությունը սահմանվում է դատական ակտով՝ պարտատերերի պահանջների բավարարման չափի հետևյալ տոկոսադրույքներով՝

- 1) մինչև 25 միլիոն դրամ՝ 10 տոկոս.
- 2) 25-50 միլիոն դրամ՝ 2 500 000 դրամին գումարած 25 միլիոն դրամը գերազանցող գումարի 8 տոկոսը.
- 3) 50-100 միլիոն դրամ՝ 4 500 000 դրամին գումարած 50 միլիոն դրամը գերազանցող գումարի 3 տոկոսը.
- 4) 100-500 միլիոն դրամ՝ 6 000 000 դրամին գումարած 100 միլիոն դրամը գերազանցող գումարի 2 տոկոսը.
- 5) 500 միլիոն դրամից ավելին՝ 14 000 000 դրամին գումարած 500 միլիոն դրամը գերազանցող գումարի 1 տոկոսը:»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն **սնանկության գործով վարույթի տևողությունը** (սկսած պարտապանի լուծարման վարույթ սկսելու մասին որոշում կայացնելու պահից մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճիռ կայացնելը) մինչև վեց ամիս տևողության դեպքում (չհաշված ֆինանսական առողջացման ծրագրի ժամանակահատվածը) կառա-

¹ Աղբյուրը՝ <https://www.nobelprize.org/prizes/economic-sciences/2020/summary/> էլեկտրոնային ռեսուրս:

վարիչը ստանում է պարզևավճար: Ընդ որում, պարզևավճարի չափը սահմանվում է՝

➤ պարտատերերի պահանջների բավարարման չափի մինչև 50 միլիոն դրամը՝ կառավարչի հաշվարկվող վարձատրության 20 տոկոսի չափով,

➤ պարտատերերի պահանջների բավարարման չափի 50 միլիոն դրամ և ավելի դեպքում՝ հաշվարկվող վարձատրության 50 տոկոսի չափով:

Թեև, առաջին հայացքից թվում է, թե օրենքով ինչպես կառավարչի վարձատրության, այնպես էլ պարզևատրման համար նախատեսված են բավարար մեծության տնտեսական խթանման միջոցներ, սակայն իրականում հազվադեպ են ՀՀ-ում սնանկության այն գործերը, որոնք ավարտվում են վեց ամսում կամ մեկ տարվա ընթացքում: Բանն այն է, որ սնանկության գործերով կառավարիչներին ձեռնտու է այդ գործընթացը ձգձգել տարիներ շարունակ, քանի որ ինչպես աճուրդների կազմակերպումը, այնպես էլ սնանկության գործընթացի ձգձգումը նրանց համար ավելի շահեկան պայմաններ են ստեղծում, քան օրենքով նախատեսված պայմանները: Պրակտիկ փորձը, ցավոք, բերում է այն համոզման, որ կառավարիչներին ձեռնտու է սնանկության գործի ձգձգումը, քանի որ, չնայած, օրենքով սահմանվում են հատուկ վարձավճարներ գործը հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտին հասցնելու համար, այնուամենայնիվ, դե ֆակտո գործունեության ստվերայնության «շնորհիվ» կառավարիչները տնտեսապես ավելի մեծ շահույթ են ունենում (օրինակ՝ վերոնշյալ աճուրդների կազմակերպման գործընթացներից): «Սնանկության մասին» ՀՀ *օրենքի առանձնահատկություններից մեկը սնանկության գործընթացում պարտապանի առկա ակտիվների բաշխման և պահանջների բավարարման առանձնահատուկ հերթականությունն է*, որը բխում է սնանկության ինստիտուտի սկզբունքներից և բավարարում է սնանկության վարույթն անխափան իրականացնելու երաշխիքները: Պահանջների հերթականությունն էականորեն տարբերվում է բնականոն գործունեություն իրականացնող պարտապանի լուծարման ժամանակ պահանջների բավարարման, ինչպես նաև հարկադիր կատարման ընթացքում պարտապանի գույքի վաճառքից առաջացած միջոցների բաշխման հերթականություններից¹:

Սնանկությանը վերաբերող օրենսդրության և ինստիտուցիոնալ կառույցների նպատակը առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության պահպանման, ինքնուրույն վերակազմավորման, սնանկության գործընթացը նվազագույն կորուստներով ավարտելու

¹ «Սնանկության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2006թ. դեկտեմբերի 25, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=76772>

մղումն է: Այդ նպատակին են ծառայում առևտրային կազմակերպությունների պարտավորությունների մարման օպտիմալ կառուցվածքի՝ հերթագայության, վճարման չափերի, մարման ճիշտ ժամանակի ընտրությունը: Մասնկության ընթացակարգերի արդյունավետ կառավարումը էապես փոխում է կազմակերպության ենթահամակարգերի աշխատանքը: Դիցուք, դատարանների կողմից օրենսդրությամբ և նորմատիվային ակտերով ամրագրված ընթացակարգերի անմիջական կիրարկումներով պետք է փոփոխվեն կառավարման գործընթացի մասնակիցների լիազորությունները: Այդ փոփոխությունները պետք է վերաբերեն կազմակերպությունների ֆինանսական առողջացման ծրագրին, արտաքին կառավարման բարելավմանը, մրցունակ արտադրանքի թողարկմանը, հաշտության համաձայնագրերի կնքմանը և սնանկության մյուս ընթացակարգերին: Բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված խնդիրների լուծմանը իր առավելագույն նպաստը կբերի սնանկության ինստիտուտի նպատակադրումը՝ պարտապանի գույքի իրացմամբ պարտատերերի պահանջները բավարարելու ու իրավունքները վերականգնելու առումով:

Օրենսդրության հետագա զարգացումներն արդեն շեշտադրեցին այն նպատակը, ըստ որի միայն գույքի վաճառքով չէ, որ պետք է «փակվեն» պարտատերերի պահանջները, այլև կազմակերպության հնարավորինս առողջացումը պետք է մղվի առաջին պլան, որպեսզի այն մնա բիզնեսում՝ պահպանելով աշխատատեղերը: Այս նպատակադրումը դեռևս բավարար կենսունակություն չունի, որը, մի կողմից դատական համակարգի «տեղապտույտի», և, մյուս կողմից, եղած ընթացակարգերի ոչ բավարար գործադրման, և, այսպես կոչված պսևդոսնանկացման թույլտվության հետևանք են: Իրենց բնույթով պսևդոսնանկությունները գործադրվել են տարբեր սխեմաներում: Շատ հաճախ միտումնավոր ու շահադիտական կառուցակարգերի միջոցով արդարադատական չարաբացվող մոտեցումները հանգեցրել են կազմակերպությունների գույքի օտարման ու վատնման անօրինական իրավատնտեսական կարգավորումների, որոնց օրինակները բազմաթիվ են: Նշվածը հետևանք է սնանկության գործընթացի կազմակերպման ոչ թափանցիչ, ոչ հրապարակային գործողությունների, ինչպես նաև սնանկության գործընթացում գտնվող կազմակերպությունների գույքի ընդհանուր վաճառքների կազմում էլեկտրոնային աճուրդների ցածր տեսակարար կշռի:

Գաղտնիք չէ, որ ՀՀ առևտրային կազմակերպությունների արդյունավետ գործունեությանը խոշոր վտանգ հասցրեց COVID 19-ը, այնուհետև՝ 44-օրյա պատերազմը: Այդ ընթացքում տեղի ունեցավ թե՛ կազմակերպությունների գործունեության ժամանակավորապես դադարեցում, ո-

ըը հետևանք էր վնասով աշխատելու, թե՛ սնանկացում: Ստորև աղյուսակում ներկայացված է վնասով աշխատած ՀՀ կազմակերպությունների ցանկը 2020թ. դրությամբ:

Աղյուսակ 1. 2020 թվականին վնասով աշխատած ՀՀ կազմակերպությունների ցանկն՝ ըստ վնասի չափի և կազմակերպափրավական ձևի (հազ. դրամ)¹

	«Ակադ. Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ	111 289,0
	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ	49 733,0
	«Մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	17 486,0
	«Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	139 534,0
	«Հատուկ լեռնափրկարար ծառայություն» ՓԲԸ	92,0
	«Պատնեշ» ՓԲԸ*	9 488,0
	«Չարենցավանի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ*	69 860,0
	«Հատուկ կապ» ՓԲԸ	3 375,0
	«ՀԱԷԿ» ՓԲԸ*	12 797 312,0
0	«Երևանի ՋԵԿ» ՓԲԸ	11 971 602,4
1	«ԲԷՑ» ՓԲԸ	10 025 926,0
2	«Էներգետիկական համակարգի օպերատոր»	839 413,0
3	«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ»	14 309,0
4	«Նաիրիտ-2» ՓԲԸ*	681 932,0
5	«Էներգահիմպեքս» ՓԲԸ*	3 940,8

¹ *2020թ.-ի տարեկան տվյալներով 10 կազմակերպություն (վնասով աշխատած կազմակերպությունների 23,25%-ը) դարձյալ աշխատել են վնասով:

6	«Ջրառ» ՓԲԸ*	893 302,3
7	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	410 227,2
8	«Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ	512,8
9	«Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ	465,7
0	«Արմենիկում» ՓԲԸ*	5 512,0
1	«Զվարթնոց ԱՕԿ» ՓԲԸ	43 502,4
2	«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	887 094,1
3	«Ավիարուժ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	14 754,1
4	«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ*	89 631,0
5	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ*	5 156,5
6	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ	44 287,0
7	«Վաղարշապատի հիվանդանոց» ՓԲԸ	12367,9
8	«Էջմիածին» բժշկական կենտրոն» ՓԲԸ	8 122,0
9	«Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1 717,0
0	«Գյումրիի ծննդատուն» ՓԲԸ*	45 864,0
1	«Գյումրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ	81 833,4
2	«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	2 820,9
3	«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ	11 842,5
4	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	38 233,6

5	«Ծաղկաձորի բուժ. ամբուլատորիա» ՓԲԸ	185,6
6	«Արովյանի ծննդատուն» ՓԲԸ	98,5
7	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	6 036,2
8	«Աշտարակի ԲԿ» ՓԲԸ	25 675,7
9	«Թալինի ԲԿ» ՓԲԸ	4 018,7
0	«Վեդու ծննդատուն» ՓԲԸ	8 959,6
1	«Ճամբարակի ԱԿ» ՓԲԸ	3 282,4
2	«Սևանի ԲԿ»	44 197,0
3	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	1 220 342,8

Կատարված վերլուծության արդյունքները վկայում են, որ 2020 թ.-ի տարեկան արդյունքներով 148 ընկերություններից 97-ը (կամ ընդհանուր թվի 65,5%-ը) աշխատել են շահույթով (նախորդ տարի 150 վերլուծության ենթարկված առևտրային կազմակերպություններից շահույթով են աշխատել 122-ը կամ կամ 81,3%-ը), 43 ընկերություններ (կամ 29,1%-ը) աշխատել են վնասով (նախորդ տարի վնաս են ձևավորել 23-ը կամ կամ 15.3%-ը), իսկ 8 ընկերություն (կամ 5,4%-ը) 2020 թ.-ին շահույթ կամ վնաս չեն ձևավորել: Կազմակերպությունների 2020թ.-ի գործունեության արդյունքում ձևավորվել է 40645 մլն դրամ վնաս, մինչդեռ 2019 թ.-ի տարեկան տվյալներով վնասը կազմում էր 11352 մլն դրամ: Այսինքն վնասի ծավալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ ավելացել է մոտ 29293 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի ոլորտի կազմակերպությունների կողմից 36334,4 մլն դրամ ձևավորված վնասով, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կազմակերպությունների կողմից ձևավորած 901,8 մլն դրամ վնասով, Երևանի քաղաքապետարանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ձևավորած 1220 մլն դրամ վնասով: 2020 թ.-ի արդյունքներով վնասով աշխատած կազմակերպությունների վնասի չափն ըստ գերատեսչությունների

րի և առևտրային կազմակերպությունների ներկայացված է աղյուսակ 1-ում: Կազմակերպությունների զուտ շահույթի ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 6 401,9 մլն դրամով և կազմել է 2 013,4 մլն դրամ (նախորդ տարի զուտ շահույթի ընդհանուր ծավալը կազմել է 8 415,3 մլն դրամ), ընդ որում գերակշռում է ՀՀ առողջապահության նախարարության կազմակերպությունների կողմից ձևավորած շահույթը՝ 424,0 մլն դրամ, ՀՀ Պաշտպանության նախարարության կազմակերպություններինը՝ 400,7 մլն դրամ, ՀՀ Հանրային հեռարձակողի խորհրդի կազմակերպության՝ 690,1 մլն դրամ: 2020թ. տարեկան տվյալներով պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ակտիվները կազմել են ընդամենը 736 216,8 մլն դրամ, իսկ վերլուծության ենթարկված բոլոր 148 կազմակերպությունների ակտիվների շահութաբերության միջին մակարդակը կազմել է 0,602%: Ըստ ոլորտների այդ ցուցանիշի մեծություններն են՝ առողջապահության որորտի (ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ մարզպետարաններ) 91 կազմակերպությունների ակտիվների շահութաբերության միջին մակարդակը տոկոսային արտահայտությամբ կազմել է 0,799%, էներգետիկայի ոլորտի կազմակերպությունների համար՝ -1,233%, ջրային ոլորտի կազմակերպությունների համար՝ -0.267%, էկոնոմիկայի բնագավառի կազմակերպություններինը՝ 1.749%, պաշտպանության ոլորտի կազմակերպությունների համար՝ 4.611%, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների համար՝ -0,657%: Եթե դիտարկելու լինենք շահույթով աշխատած 97 կազմակերպության ակտիվների շահութաբերության միջին մակարդակը տոկոսային արտահայտությամբ, ապա այն կազմել է 2,460%, իսկ առանձին առողջապահության ոլորտի (ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ մարզպետարաններ) շահույթով աշխատած 68 կազմակերպության ակտիվների շահութաբերության միջին մակարդակը տոկոսային արտահայտությամբ կազմել է՝ 1,986%, էներգետիկայի ոլորտինը՝ 2,008%, ջրային ոլորտինը՝ 0,085%, էկոնոմիկայի բնագավառի կազմակերպություններինը՝ 3,06%, պաշտպանության ոլորտինը՝ 5,417%, քաղաքացիական ավիացիայի բնագավառում՝ 5,47%, իսկ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում՝ 0,808%: 2020թ.-ի տարեկան տվյալներով կազմակերպությունների ակտիվները կազմել են ընդամենը 736 216 814,1 հազ. դրամ (նախորդ տարի ակտիվները կազմել էր 706 288 386,0 հազ. դրամ), այդ թվում ընթացիկ ակտիվները կազմել են 186 920 967,3 հազ. դրամ (նախորդ տարի ընդամենն ընթացիկ ակտիվները կազմել էր 138 327 776,3 հազ. դրամ): Կազմակերպությունների ընդամենն ընթացիկ պարտավորությունները 2020թ.-ի տարեկան տվյալներով նախորդ

տարվա նկատմամբ նվազել են 1 662 754,6 հազ. դրամով և կազմել են 117 010 899,1 հազ. դրամ (նախորդ տարի կազմել էր 82 356 961,1 հազ. դրամ), ընդ որում բյուջեի գծով պարտավորությունները նախորդ տարվա նկատմամբ նվազել է 1 662 754,6 հազ. դրամով և կազմել են 3 713 902,2 հազ. դրամ (նախորդ տարի կազմել էր 5 376 656,8 հազ. դրամ):

Կազմակերպությունների ոչ ընթացիկ պարտավորությունները կազմել են 394 049 687,0 հազ. դրամ (նախորդ տարի այն կազմել էր 359 360 958,8 հազ. դրամ), որից 335 865 612,4 հազ. դրամը իրենից ներկայացնում են երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ՝ նախորդ տարվա նկատմամբ այն ավելացել է 40 107 164,4 հազ. դրամով (գերակշիռ մասը բաժին է ընկնում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 330 318 878,4 հազ. դրամ, ՀՀ առողջապահության նախարարության՝ 236 279,0 հազ. դրամ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ 241 993,0 հազ. դրամ կազմակերպություններին և ՀՀ քաղաքապետարանի «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին՝ 4 441 395,7 հազ. դրամ): 2020 թ.-ին կազմակերպությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 184 757 103,2 հազ. դրամ (նախորդ տարվա 176 087 595,8 հազ. դրամի փոխարեն): Հասույթի ձևավորման հիմնական գերակշռող մասը բաժին է ընկնում ՀՀ առողջապահության նախարարության՝ 13 315 658,3 հազ. դրամ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 118 383 200,3 հազ. դրամ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ 2 374 977,0 հազ. դրամ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ 2 568 529,8 հազ. դրամ, քաղաքացիական ավիացիայի կոմիտեի՝ 2 692 800,09 հազ. դրամ, ՀՀ հանրային հեռարձակողի խորհրդի՝ 7 138 335,0 հազ. դրամ, ՀՀ Արարատի՝ 4 469 412,9 հազ. դրամ, ՀՀ Լոռու՝ 6 328 246,2 հազ. դրամ, ՀՀ Կոտայքի՝ 3 540 328,5 հազ. դրամ, ՀՀ Շիրակի՝ 5 161 086,6 հազ. դրամ և ՀՀ Սյունիքի մարզպետարանների՝ 3 305 729,7 հազ. դրամ կազմակերպություններին և Երևանի քաղաքապետարանի «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին՝ 2 509 818,2 հազ. դրամ:

2020 թ.-ի տարեկան արդյունքներով կազմակերպությունների աշխատակիցների ընդհանուր թիվը կազմել է 23 338 աշխատող՝ 2019թ.-ի նկատմամբ աշխատողների թվաքանակն ավելացել է 183 -ով:

Մոնիտորինգ իրականացնող մարմնի կողմից նշվում է, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ արդարադատության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, ՀՀ Վայոց Ձորի և

ՀՀ Տավուշի մարզպետարանների ենթակայության բոլոր կազմակերպությունները հաշվետու ժամանակաշրջանում աշխատել են շահույթով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սնանկացման և սանացիայի ընթացակարգերում ներառված կազմակերպության ֆինանսական առողջացմանը նպաստող և տնտեսական արդյունավետության բարձրացմանն ուղղված մոտեցումներն ապահովվում են արդյունավետ կառավարման կառուցակարգերի ստեղծմամբ, որոնք իրենցից ներկայացնում են մի շարք միջոցառումների համալիր:

Առաջին և կարևորագույն *միջոցառումը հարկային վճարումների դադարեցում առողջացման ընթացքում, վարկերի տրամադրում վերաֆինանսավորման տոկոսադրույքով և այլ իրավական նորմերի կարգավորման կատարելագործմանն համընթաց տնտեսական պայմանների առողջացումն է:* Հիմնաքարային միջոցառումների շարքին են դասվում նաև ակտիվների առավել արդյունավետ օգտագործման նպատակով անվճարունակության գործընթացի վերահսկողության ապահովումը: Նման խնդիր է առաջանում, երբ անվճարունակ կազմակերպությունն ունի մեկից ավելի սեփականատեր: Այս իրավիճակում օրենսդրությունը պետք է նախատեսի կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան առանց խտրականության իրականացնել սեփականատերերի շահերի պաշտպանությունը: Միջոցառումների ցանկում առանցքային է նաև *սնանկության կառավարիչների գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացումը*, այն է՝ աշխատանքի վճարման համակարգի ընտրություն և սկզբունքների փոփոխություն, ֆինանսական պատասխանատվության վերականգնում գործունեության արդյունքների հաշվին՝ դրա պահպանման համակարգի ստեղծմամբ: Կազմակերպության ֆինանսական առողջացմանն ուղղված միջոցառումներից են նաև *անվճարունակ ձեռնարկատերերի աշխատակիցների սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացումը*, պարտատերերի շահերի պաշտպանության ապահովումը՝ նրանց պահանջների առավելագույն բավարարմամբ, ինչպես նաև կառավարչի կողմից պարտատիրոջը տեղեկատվության հասանելիության ապահովումը:

Այսպիսով, սնանկացման ինստիտուտը կարող է որոշակի խթան հանդիսանալ կազմակերպության արդյունավետ զարգացման համար, քանի որ այն համարվում է միջոց՝ միաժամանակ մի շարք խնդիրների լուծման համար, օգնում է տնտեսության մեջ իրականացնել բարեփոխումներ, նպաստում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների առավել արդյունավետ աշխատանքին, բարելավում է կազմակերպություն-

ների կառավարման մակարդակը, հանդիսանում է լրացուցիչ երաշխիք վարկատուների շահերի պաշտպանության և չօգտագործվող ակտիվները սնտեսական շրջանառություն վերադարձնելու համար:

Варсеник Саргсян, Препятствующие факторы банкротства армянских организаций и некоторые подходы к урегулированию. Одним из ключевых условий улучшения социально-экономического положения Республики Армения, помимо реформы различных институциональных структур, является эффективное функционирование экономики. Последнее может быть гарантировано эффективной работой коммерческих организаций. Многие эксплуатирующие организации, не имея возможности продолжать свою прибыльную деятельность, оказываются в сфере несостоятельности, что приводит к цепной реакции в экономике. Нарушается не только нормальное функционирование организации, но и некоторые взаимосвязанные сферы оказываются в сложной финансово-экономической ситуации. Уместна параллель, согласно которой в сфере здравоохранения приоритет отдается диагностике и профилактике, а также обеспечение финансовой стабильности и финансового оздоровления в случае банкротства организаций должно стать решающим фактором в предотвращении роспуска организации. В случае аномальных явлений, таких как COVID-19, послевоенная ситуация в стране, вся экономика столкнулась с кризисом. При этом одной из мер по укреплению иммунитета организаций является предоставление государством пакетов финансовой поддержки. Еще одним проявлением ослабленной иммунной системы является дискриминационная, неконкурентная среда. Поэтому предложение адекватных решений по предотвращению корпоративного банкротства, законодательных и структурных усовершенствований активно используется как при нормальном развитии событий, так и при возможных шоковых последствиях.

Varsenik Sargsyan, Bankruptcy preventing factors and regulation approaches of organizations in the Republic of Armenia. One of the key conditions for improving the socio-economic situation of the Republic of Armenia, including the reform of various institutional structures, is the effective operation of the economy. The latter can be guaranteed by the effective operation of commercial organizations. Many operating organizations, unable to continue their profitable activities, find themselves in the realm of insolvency, which leads to a chain reaction in the economy. Not only the normal functioning of the organization is disrupted, but also some interconnected spheres find themselves in a difficult financial and economic

situation. The parallel is appropriate, according to which, in the field of healthcare, priority is given to diagnosis and prevention, as well as ensuring financial stability and financial recovery in case of bankruptcy of organizations should become crucial in not dissolving the organization. In the event of abnormal developments, such as COVID-19, the post-war situation in the country, the entire economy has faced a crisis. In this case, one of the measures to strengthen the immune system of organizations is the provision of financial support packages by the state. Another manifestation of a weakened immune system is a discriminatory, non-competitive environment. Therefore, proposing adequate solutions for bankruptcy prevention of organizations, legislative and structural improvements is strongly used both during normal developments and possible shock effects.

Ուղարկվել է խմբագրություն 31.01.2022թ.
Գրախոսվել է 31.01.2022թ.